Կարգապահական գործ թիվ ԿԳ-25077

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԳՐԻՇԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Նինա Հարությունյանի,

քննության առնելով փաստաբան **Կարինե Գրիշայի Դանիելյանի (այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 721), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Նինա Հարությունյանը **(այսուհետ՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Կարինե Գրիշայի Դանիելյանն իր մասնագիտական պարտականությունները բարեխիղճ չի իրականացրել: Դիմողը հայտնել է, որ սկսած 2023 թվականից մի քանի փուլով վճարել է 240.000 ՀՀ դրամ իր անձնական հաշվեհամարից փոխանցել է Փաստաբանին ամուսնալուծության գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու համար: Խնդրել է կատարել անհրաժեշտ միջամտություն կարգապահական միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

Թիվ ԿԳ-25077-2-Ա
12 նոյեմբերի 2025թ.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Դիմողին առաջարկվել է ներկայացնել բացատրություն, մասնավորապես՝ ներկայացնել, թե ըստ Դիմողի ինչով է դրսևորվել Փաստաբանի կողմից բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալը, ինչի կապակցությամբ Դիմողը 01.07.2025թ. ներկայացրել է բացատրություն, որով մասնավորապես նշել է, որ 2023 և 2024 թվականներին դիմել է Փաստաբանին՝ իրավաբանական ծառայություններից օգտվելու նպատակով և խնդրել է Փաստաբանին ամուսնալուծության հայց ներկայացնել դատարան: Փաստաբանը համաձայնել է, և Դիմողը փոխանցել է նրան համապատասխան հոնորար՝ ընդհանուր առմամբ մի քանի հարյուր հազար դրամ, որի վերաբերյալ ունի անդորրագրեր:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը, չարաշահելով Դիմողի վստահությունը, երկար ժամանակ Դիմողին հույսեր է տվել, թե հայցն արդեն ընթացքի մեջ է, ամեն ինչ նորմալ է, և շուտով արդյունք կլինի, սակայն փաստացի որևէ էական գործողություն չի ձեռնարկել և անընդհատ հետաձգել է գործը և խուսափել կոնկրետ պատասխաններից:

2025 թվականի մայիսին, երբ Դիմողը կրկին դիմել է Փաստաբանին հստակ պարզաբանումներ ստանալու նպատակով, նկատել է տարօրինակ և անհասկանալի արձագանք, ինչի պատճառով Դիմողը դիմել է մեկ այլ փաստաբանի՝ գործը ստուգելու համար և արդյունքում պարզվել է, որ Փաստաբանը մայիսի 20-ին հայց է ներկայացրել դատարան՝ օգտագործելով Դիմողի անունից տրված կեղծ լիազորագիր:

Ըստ Դիմողի՝ ինքը չի ստորագրել այդ լիազորագիրը, իսկ դրանում առկա ստորագրությունը տարբերվում է նախկինում Դիմողի կողմից տրված ձեռագիր և իր ստորագրությամբ տրամադրվածից:

Դիմողի պնդմամբ, երբ ինքը բարձրաձայնել է իր կասկածները և պահանջել պարզաբանում, Փաստաբանը ոչ իրավաչափ վարքագիծ է թույլ տվել, սկսել է անձնական սպառնալիքներ հնչեցնել այն մասին, որ Դիմողի որդուն կհայտնի այն որոշ տեղեկությունները, որոնք ստացել է Դիմողից:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Կարինե Գրիշայի Դանիելյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 02.09.2025թ. Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարինե Գրիշայի Դանիելյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Նինա Հարությունյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 02.07.2025թ. Պալատում մուտքագրված բացատրությամբ տեղեկացրել է, որ 2023 թվականի հունիս ամսին Նինա Հարությունյանը դիմել է իրեն իրավական օգնություն ստանալու նպատակով: Նինա Հարությունյանը ցանկացել է հայց ներկայացնել «Երևան» նոտարական տարածքի նոտարներից մեկի կողմից վավերացված՝ անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու համար: Վերոհիշյալ հայցադիմումը դատարան մուտքագրելու կապակցությամբ Դիմողը և իր որդին, սկսած 2023 թվականի հունիս ամսից մինչև 2023 թվականի սեպտեմբեր ամիսը պարբերաբար Փաստաբանից ստացել են իրավաբանական խորհրդատվություն:

Փաստաբանը նշել է, որ 2023 թվականի սեպտեմբեր ամսին Դիմողն իրեն տեղեկացրել է, որ այլևս չի ցանկանում հայցադիմում ներկայացնել դատարան, սակայն երկու ամիս պարբերաբար խորհրդատվություն ստանալու համար Փաստաբանին վճարել է 80.000 դրամ գումար, իսկ 2024 թվականի նոյեմբեր ամսին կրկին դիմել է Փաստաբանին՝ արդեն ամուսնալուծության պահանջ ներկայացնելու նպատակով:

Հայցադիմումը ներկայացնելու համար Փաստաբանը Դիմողից ի թիվս այլ փաստաթղթերի պահանջել է վերջինիս, ամուսնության վկայականի բնօրինակը: Պահանջվող փաստաթղթերի պատճենները Դիմողը Փաստաբանին ուղարկել է 2024 թվականի նոյեմբերի 06-ին «WhatsApp» կայքի միջոցով, սակայն Փաստաբանը Դիմողին բացատրել է, որ ամուսնալուծության պահանջ ներկայացնելու համար անհրաժեշտ է ամուսնության վկայականի բնօրինակը, իսկ փաստաթղթի պատճենը չի համարվում պատշաճ ապացույց: Նշված հայցադիմումը դատարան մուտքագրելու նպատակով Փաստաբանը Դիմողից պահանջել է 20.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրք՝ դատարան ներկայացվող հայցադիմումի համար, իսկ որպես փաստաբանական ծառայությունների համար պահանջել է՝ 200.000 ՀՀ դրամ գումար: Դիմողը վճարել է գումարի մի մասը բանկային փոխանցմամբ:

Փաստաբանի պնդմամբ, հաշվի առնելով, որ Դիմողը չի կարողացել իր ամուսնության վկայականի բնօրինակը տրամադրել Փաստաբանին, վերջինս փորձել է ՔԿԱԳ գործակալությունից ստանալ նրա ամուսնության վերաբերյալ տեղեկանք, սակայն գործակալությունից հայտնել են, որ նման տեղեկանք ստանալու համար անհրաժեշտ է Դիմողի կողմից նոտարական կարգով տրված, և անպայման ապոստիլով հաստատված լիազորագիր, ինչի մասին Փաստաբանն անմիջապես տեղեկացրել է Դիմողին:

Հաշվի առնելով, որ տևական ժամանակ Դիմողը չի կարողացել ձեռք բերել անհրաժեշտ լիազորագիրը, և որպեսզի Փաստաբանը կարողանա հայցադիմումը մուտքագրել դատարան, ինքը դիմել է համապատասխան նոտարական տարածքի նոտարին և ձեռք բերել ամուսնության պետական գրանցման ակտը: Այնուհետև քաղաքացիական դատավարությամբ սահմանված կարգով արտադատական կարգը սպառելուց հետո հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ ամուսնալուծության պահանջի վերաբերյալ (թիվ ԵԴ2/5261/02/25 քաղաքացիական գործ):

Դիմողը թիվ ԵԴ2/5261/02/25 քաղաքացիական գործով դատարանի՝ վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո կապ է հաստատել Փաստաբանի հետ և հայտնել, որ չի ցանկանում, որ Փաստաբանը դատարանում ներկայացնի իր շահերը՝ պահանջելով իր կողմից վճարված 150.000 դրամը և 2023 թվականին լրիվ այլ գործով խորհրդատվություն ստանալու համար վճարված 80.000 դրամը հետ վերադարձնել:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողի բանկային քարտին 05.06.2025թ. փոխանցել է 100.000 դրամ գումար, որը նախապես վճարվել էր իրեն՝ ամուսնալուծության գործով դատական ներկայացուցչություն իրականացնելու նպատակով, ու այդպիսով դադարեցվել է նրան իրավաբանական օգնության տրամադրումը: Մնացած 50.000 ՀՀ դրամից 20.000 դրամը վճարվել է թիվ ԵԴ2/5261/02/25 քաղաքացիական գործով որպես պետական տուրք, 2.000 ՀՀ դրամ՝ նոտարական ծառայությունների գումար:

Փաստաբանը նշել է, որ Դիմողին տեղեկացրել է այլ գումարները վերադարձման ենթակա չլինելու մասին, քանի որ մի շարք գործողություններ կատարվել են:

Փաստաբանը նշել է, որ դիմումի բովանդակությունից իր համար պարզ չէ, թե կոնկրետ ինչ հարցում է Դիմողը դժգոհ, սակայն հստակության համար իր բացատրությամբ հայտնել է, որ հայցադիմումը դատարանում մուտքագրել է մայիսի 5-ին, քանի որ տևական ժամանակ Դիմողը չի կարողացել իրեն ուղարկել անհրաժեշտ լիազորագիրը: Ի գիտություն նաև հայտնել է, որ Դիմողը նոտարական կարգով տրված և ապոստիլով հաստատված լիազորագիրը կարողացել է ձեռք բերել միայն 2025 թվականի մայիս ամսվա վերջին, երբ իր կողմից ներկայացված հայցադիմումն արդեն իսկ դատարանի կողմից ընդունված է եղել վարույթ:

Վերը նշվածով պայմանավորված, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 02.09.2025թ. Փաստաբանին առաջարկվել է գրությունը

ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 11.09.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ թիվ ԵԴ/5262/02/25 քաղաքացիական գործով 03.06.2025թ. դատարանը Նինա Հարությունյանի հայցադիմումն ընդդեմ Նորայր Սիմոնյանի ընդունել է վարույթ, որը առանց փաստաբանին տրված լիազորագրի առկայության դատարանը վարույթ չէր ընդունելու:

Դիմողը փաստաբանին տրամադրել է լիազորագիրը «WhatsApp» կապի միջոցով, որը եղել է ֆոտո նկարի տեսքով: Ավելին, Դիմողը տրամադրել է երկու լիազորագիր, որից մեկը վերաբերվել է ՔԿԱԳ գործակալությունից իր ամուսնական վկայականի բնօրինակը ստանալու հետ կապված գործողություններ կատարելուն, որը նույնպես ուղարկվել է «WhatsApp» կապի միջոցով:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը չի ցանկացել հրաժարվել իր ծառայություններից:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 11.07.2025թ. թիվ 197-Ա/ԿԳ-25077 որոշմամբ փաստաբան Կարինե Դանիելյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 2.2.1 և 2.2.2** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

18.07.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 16.09.2025թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 16.09.2025թ.:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 12.11.2025թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, պարտավորվելով ամուսնալուծության հայցադիմում ներկայացնել դիմողի անունից ինչի կապակցությամբ Դիմողը պարբերաբար վճարել է Փաստաբանին որոշակի գումար: *Սույն փաստը հաստատվում է «Datalex» դատական տեղեկատվական համակարգում թիվ ԵԴ2/5261/02/25 քաղաքացիական գործի վերաբերյալ առկա տվյալներով, կողմերի բացատրությամբ, ինչպես նաև 05.12.2024 և 06.02.2025 թվականին բանկային փոխանցման անդորրագրերով:*

2. «Datalex» դատական տեղեկատվական համակարգի համաձայն՝ Փաստաբանը 20.05.2025 թվականին հայցադիմում է ներկայացրել Դիմողի անունից, որը Դատարանի 03.06.2025 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում թիվ ԵԴ2/5261/02/25 քաղաքացիական գործի վերաբերյալ առկա տվյալներով:*

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ Դիմողի բացատրություններով, ինչպես նաև դրանց կից ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում չի հաստատվում այն փաստը, որ Դիմող Նինա Հարությունյանի փաստաբան Կարինե Դանիելյանին տրված լիազորագիրը եղել է կեղծ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Դանիելյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.1 և 2.2.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված

կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի

վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է վստահորդի վստահությունը չարաշահելու, ինչպես նաև փաստաբանի ու փաստաբանության նկատմամբ վստահությունը և հարգանքը կասկածի տակ դնող կամ խաթարող գործողություններ կատարելուց չխուսափելու վարքագիծը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանի մասնագիտական*

անկախությունը, պարկեշտությունը, ազնվությունը և բարեխղճությունը փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ քաղաքացու կամ հասարակության վստահության անհրաժեշտ պայմաններ են: Վստահության չարաշահումը անհամատեղելի է փաստաբանի կոչման հետ:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, վստահորդի շահերի արդյունավետ ու բարեխիղճ պաշտպանությունից բացի, փաստաբանի վրա դրվում են բազմազան այլ իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ՝ հաշվի առնելով, որ փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է:

Ըստ այդմ, փաստաբանը բոլոր դեպքերում իրավունքի չունի կատարել այպիսի գործողություններ, որոնց արդյունքում կարող է չարաշահել իր վստահորդի վստահությունը, քանի որ նման վարքագիծը անհամատեղելի է փաստաբանի գործունեության հետ: Ընդ որում, այդ վարքագիծը սերտորեն կապված է նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվող նեգատիվ պարտականության պահպանման հետ, այն է խուսափել այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ փաստաբան Կարինե Դանիելյանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, պարտավորվելով ամուսնալուծության հայցադիմում ներկայացնել դիմողի անունից, ինչի կապակցությամբ Դիմողը պարբերաբար վճարել է Փաստաբանին որոշակի գումար: Այնուհետև, «Datalex» դատական տեղեկատվական համակարգի համաձայն՝ Փաստաբանը 20.05.2025 թվականին հայցադիմում է ներկայացրել Դիմողի անունից,

որը Դատարանի 03.06.2025 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ: Դիմողի պնդմամբ, դատական հայցին կից ներկայացվել է կեղծ լիազորագիր:

Հարկ ենք համարում անդրադառնալ բարձրացված խնդրին մի քանի ասպեկտներով.

1. Դիմողի վկայակոչած փաստի հաստատման նպատակով վերջինիս Աշխատակցի կողմից 02.09.2025թ. ուղարկվել է կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու պահանջ: Դիմողից պահանջվել են *ապացույցներ առ այն, որ 2025թ. դպրարանում մուտքագրված հայցադիմումին կից ներկայացված լիազորագիրը եղել է կեղծ ստորագրությամբ:*

Միաժամանակ, Դիմողից պահանջվել են նաև ապացույցներ առ այն, որ Փաստաբանը Դիմողին ենթարկել է շանտաժի և սպառնացել:

Աշխատակցի 02.09.2025թ. պահանջը ուղարկվել է Դիմողին փոստային առաքման եղանակով, իր կողմից սկզբնական դիմումով տրամադրած հասցեով, ինչը հաստատվում է 02.09.2025թ. փոստային ստացականով:

Դիմողի կողմից իր վկայակոչած պնդումների հաստատման համար որևէ ապացույց չի ներկայացրել:

2. **Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝** *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ենթադրյալ խախտում թույլ տված փաստաբանի նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը և քանի դեռ Դիմողը չի ապացուցել Փաստաբանի վարքագծում էթիկական նորմերի խախտման հանգամանքը, վերջինս համարվում է անմեղ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Դիմողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել Փաստաբանին վերագրվող արարքների կատարման հաստատման վերաբերյալ, **ուստի՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են Փաստաբանի օգտին:**

3. Հաջորդ կարևոր հանգամանքներից այն է, որ Փաստաբանը իր հերթին հերքել է Դիմողի պնդումները և 11.09.2025թ. բացատրության կից ներկայացրել է կողմերի նամակագրությունների լուսապատճենները, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դիմողը 16.04.2025թ. լիազորել է Փաստաբանին ներկայացնել իր շահերը մի շարք պետական մարմիններում, այդ թվում՝ ՔԿԱԳ բաժնում: Բացի այդ,

փաստաբանի կողմից ներկայացվել է նաև ֆրանսերեն լեզվով տրամադրած լիազորագիր հաստատված ապոստիլով, որոնց հիման վրա Փաստաբանը հարցման միջոցով ձեռք է բերել Դիմողի ամուսնության պետական գրանցման ակտի պատճենը:

Ամփոփելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով սույն կարգապահական գործում առկա բոլոր ապացույցները գալիս է այն եզրահանգման, որ չի հիմնավորվել Փաստաբանի վարքագծում **Կանոնագրքի 2.2.1-րդ և 2.2.2-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտման առկայությունը**

Հետևաբար Փաստաբանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների առերևույթ խախտումը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Կարինե Գրիշայի Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 721) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.1 և 2.2.2 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25077 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25077-2-Ա
12 նոյեմբերի 2025թ.
ք.Երևան